

Դեռ պտուղը կանանց եղած ատենը՝ կուզէն կը զատեն, հատիկ հատիկ կ'ընեն, ու կը բոհրեն ուրիշ եղածող հունտերու նման . ետքը կը ծեծեն, տօպրակի մէջ կը դնեն, բերանը կապ բարձրկեկ խալկինի մը մէջ կը կախեն, տակը տօպրակին չդրպչելու չափ ջուր կը լեցընեն, խալկինին բերանը կը դոցեն ու կ'եփեն, ջրին չոգին կը ծըծէ . ետքը երկու տախտակի մէջ տեղը կը սըխմեն, եղը դուրս կուտայ : ԱՌԱՋ որ բոհրելէն ու ծեծելէն ետե խալկինը լեցընես ջրով, քանի եփի նէ՝ եղը դուրս տայ, ու վրայէն քամես առնես :

ԱՄՈՆՔ բեեկնի եղը շատ գովեցին, որ ոչ միայն իրենց ձէթէն աժան կ'ըլլայ, այլ և չդրպչիր, ու շատ օգտակար և ախորժածաշակ է, մազտաքէի համու հոտ ունի . կերակուրի, ձուկի, աղցանի լաւ կը յարմարի :

Եւ որովհետեւ Հայաստան ամէն տուն իրենց սապոնը իրենք կը շինեն, դմակի եղէ, Ճարպէ, այլ և արջուն խոզու եղերէ, Դաւառ ըսուած տեղի Հայերը, որ Տիարպէքիրի և ԱՌՈՒ մէջտեղը լեռներու բնակիչներն են, աս բեեկնի պտուղին եղէն սապոն կը շինեն . որ ձէթի սապոնէն ալ ազնիւ, հոտաւէտ, դիմացկուն, ու շատ փըրփըրուն սապոն կ'ըլլայ . թէպէտ գոյնը կապուտակ է, բայց լաթը գեղեցիկ կը ճերմկցընէ :

ԱՌԵԿԵՆԱՅ թէ ասկէ մշկահոտ սապոն ալ շինուի նէ, ամենէն գերազանց ըլլալու է :

ԱՌՈՉ վարպետին մէկն ալ վկայեց՝ թէ աս եղէս կտաւատի եղին տեղը պատկերքներու և ներկի կը գործածեմ, շատ փայլուն ու պայծառ կ'ընէ :

Պ. Պ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գ.

ԱՌԵՐԴՈՒ երրորդ հասահին վրայ, որ է Երիտասարդութիւն :

ԱՌԱԴՈՒՍ երրորդ հասակը, որ է երիտասարդութիւն կամ կատարեալ հասակ ըսուածը, երեսներորդ տարին չմտած կը սկսի . այսինքն երբոր մարմնոյն աճումը ալ կը դադրի : Այս հասակին մէջ մարդ որ և իցէ բան աւելի հասուն մտօք կը մտածէ ու կարգաւորեալ կերպով կը կատարէ . որովհետեւ մարդուս թէ մարմնոյն և թէ հոգւոյն կարողութիւնները երեսներորդ տարիին վերջը կատարեալ կը սեպուին . և ԱՄՈՒԾՈՒ մարդուս տուած զանազան ձիրքերը աւելի աս միջոցիս կը փայլին, մանաւանդ էրիկ մարդկանց վրայ, որոնց մեծամեծ բաներ ընելու և աշխարհք կառավարելու կարողութիւնը և իշխանութիւնը իրենց երիտասարդական կտրիճ մարմնոյն վրայ յայտնի կ'երևնայ : Երիտասարդին շիտակ ու անվախ կեցուածքէն, և ուժով քալուածքէն, և ուրիշ Ճարպիկ շարժմունքներէն յայտնի կ'ըլլայ մարդուս իշխանական հոգին . ու քանի որ գլուխը վեր բռնած իրեն խորհրդաւոր Ճակատը կը տեսնուի, կ'իմացուի անոր վեհանձնութիւնն ու մեծամեծ բաներու կարողըլլալը : Երեսին վըրայ տպաւորուած է իրեն հոգւոյն աստուածանման պատկերը, սրտին ամէն զգացմունքները անով ճիշդ կը յայտնէ . ուրիշ զգացմունքներն ալ իրեն կամացը ամենայն ուզածները կատարելու համար մէյմէկ պատրաստական սպասաւորներու կը նմանին, ու իւրաքանչիւրը իրեն ընկածը կ'ընէ :

Կատ անգաման բանն որ աչքով
տեսեր ու խաբուեր ենք, ձեռքով
շօշափելով՝ անոր ձշմարտութիւնը
կը ստուգենք . և զարմանալու բանը
աս է որ կուրեր կը գտնուին որ մա-
տուցներուն շօշափելովը ոչ միայն նիւ-
թին ինչ բան ըլլալը կ'իմանան , այլ
նաև անոր գոյնն ալ, որ տեսութիւնը
միայն պիտի իմացուեր : Ծ օշափա-
կան զգայարանքին գործարանը մար-
մնոյն վրայի մորթն է , որ զարմանալի
մանրաթել ջղերով հիւսուած է՝ բա-
րակ կտաւի պէս . մորթին երեսը եր-
կայն բարակ գծերով լեցուն է . և ո-
րովշետև աս ջղային գծերը աւելի
մարդուս մատուցներուն վրայ շատ
են , անոր համար մատուցները աւե-
լի զգայուն կ'ըլլան քան մարդուս մէ-
կալ անդամները : Ուստի միայն մար-
դուս ձեռքը գլխաւոր գործարան ու
սքանչելի գործիք մըն է , որ ամէն ար-
հեստի ու ամէն բանի յարմարու-
թիւն ունի կատարեալ կերպով . որով
հետև մէկալ ամէն կենդանիները
կամ ամենևին ձեռք չունին , և կամ
ձեռքի նման ունեցածնին ալ աւելի
ոտք կ'ըսուի՝ քան թէ ձեռք : Եթն-
դանեաց մէջ միայն կապիկը մարդուս
նման ձեռք ունի , բայց անով ինքը
քանի մը դիւրին բաներ հազիւ կըր-
նայ ընել . իսկ մարդկանց ձեռագործ-
ները անթիւ ու անհամար են : Օ ար-
մանալի են մարդուս ձեռքին ունեցած
այսչափյօդուածներն ու խաղերը , որ
ինչպէս ջղերով իրարու հետ կապկը-
սուած ու անանկ միացած են՝ որ
մարդ ուզածին պէս կրնայ աս յօ-
դուածներն ու խաղերը շարժել . զար-
մանալի է նոյնպէս ասոնց ունեցած
ոյժն ու ամրութիւնը , որոնցմով
մարդիկ երկայն ատեն կրնան աշխա-
տիլ բանի մը վրայ : Վարդուս ձեռ-
քին մաշկը թոյլ է , որով կրնայ մարդ
ձեռքերը ուզած ատենը բանալ ու
գոցել , ու մատուցներուն ներսի կող-
մը մնութ ու փափուկ է . իսկ ծայրի

ըղունգները ամրութիւն ու միանգա-
մայն տեսք կուտան մարդուս մատուը-
ներուն :

Ուսերը մարդուս մարմնոյն զօրա-
ւոր տեղերէն մէկն է , որով մարդ
կրնայ ուսին վրայ ծանր ծանր բեռ-
ներ վերցնելու տանիլ : Ուսերը զա-
նազան շարժմունքներով մարդուս
շատ տեսակ զգացմունքները կ'իմա-
ցընեն . զոր օրինակ ուրախութեան
ատեն տեսակ տեսակ կերպերով կը
շարժին թեւերը . իսկ տրտմութեան
ատեն վար ընկած կախ կը մնան ,
խնդրուածքի ու աղօթքի ատեն ալ
շատ անգամ դէպ'ի երկինք կը բար-
ձրանան , որով կ'իմացուի թէ մար-
դուս մի միայն յոյսը լ'ստուծոյ վրայ է :

Լ մէն բան մարդուս աղէկ կամգէշ
երեցընողը աչքն է , որ մէկալ ամէն
զգայարանքներէն աւելի մարդուս ե-
րեսին կենդանութիւն մը կուտայ ի-
րեն վառվըռուն շարժուածքովը , և
մարդուս ներքին զգացմունքները
կարծես թէ մէկ կերպով մը աչքին
վրայ գծագրած կը տեսնուին . ա-
նանկ որ աչքը մարդուս հոգւոյն հայ-
լին կը սեպուի . վասն զի տեսողական
ջղերն ալ անմիջապէս ըղեղին հետ
հաղորդակցութիւն ունին , ու աչքը
ինչուան որ չտեսնէ թէ ախորժելի և
թէ անախորժելի բաները , մարդուս
միտքը նոյն զգացմունքները չկրնար
ունենալ : Ի այց աչքի պէս սքանչելի
գործարանին ինչ կերպ կազմուածք
ունենալը կ'արժէ որ համառօտ մը
զուրցենք ուրիշ անգամ :

Հ . Մ . Տ

ՄԱՐԴՈՒՍ կարծիքը իր ծոցի ժամացուցին նման
է . ինչպէս որ իր ժամացուցը ուրիշներուն ժամա-
ցուցին պէս ետե կամ առաջ չիսանիր ամէն ատեն ,
այսպէս ալ կարծիքը ամենուն կարծիքին չարմար-
ցըներ :

ՓՈՓ